ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ <<ՀՀ Արարարատի մարզի Արևաբույր Հրաչյա Թադևոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի թափուր աշխատատեղեր՝ կենսաբանություն՝ 8 դասաժամ, ֆիզկուլտուրա 17 դասաժամ, և հայտարարվում է մրցույթ ուսուցչի թափուր աշխատատեղերը լրացնելու համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 01- ից մինչև նոյեմբերի 14- ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից, 15^{00}-ը բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ.-ին**, նոյեմբերի 19-ին ժամը 14^{00}-ին ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի Հրաչյա Թադևոսյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ գյուղ Արևաբույր Հրաչյա Թադևոսյան փ. շենք N 1: Տեղեկությունների համար զանգահարել 093-093-885 հեռախոսահամարով: